

Արձանագրություն

«ԱՍՍԱԹ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված՝ ՀՀ Լոռու մարզի Քարաքերդի ուկու հանքավայրի (Կենտրոնական տեղամաս) ժամկետի երկարաձգման, բացահանքի և ստորգետնյա հանքի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ

Հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 1325-Ն որոշման (այսուհետ՝ նաև Կառավարության որոշում) պահանջները՝ 2023 թվականի հոկտեմբերի 5-ին, ժամը 12:00-ին ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Քարաքերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ հանրային քննարկում (լսումներ) «ԱՍՍԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված՝ ՀՀ Լոռու մարզի Քարաքերդի ուկու հանքավայրի (Կենտրոնական տեղամաս) ժամկետի երկարաձգման, բացահանքի և ստորգետնյա հանքի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ (2-րդ փուլ) (այսուհետ՝ նաև Հանրային քննարկում):

Հանրային քննարկմանը մասնակցում էին՝

– Հանրային քննարկման պատասխանատու՝ ՀՀ, Լոռու մարզի Փամբակ համայնքի (այսուհետ նաև Համայնք) ղեկավար Սուրեն Կոստանդյանը.

– «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ Հերիքնազ Մկրտչյանը.

– Նախատեսվող գործունեության ձեռնարկողի՝ «ԱՍՍԱԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն, ԱՍՍԱԹ կամ Զերնարկող) ներկայացուցիչներ Պերճ Խաչատրյանը, Գարիկ Մալաքյանը.

– Ազդակիր համայնքի բնակիչներ.

(մասնակիցների ցանկը կցվում է սույն արձանագրությանը):

Հանրային քննարկումը վարեց քննարկման պատասխանատուն՝ ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ղեկավար Ս. Կոստանդյանը:

Հանրային քննարկման ընթացքում հնչեցված ելույթները, դիտողությունները, առաջարկությունները, հարցերը և պատասխանները:

Որպես ազդակիր համայնքի ղեկավար, բացման խոսքով հանդես եկավ Փամբակ համայնքի ղեկավար Ս. Կոստանդյանը՝ ներկայացնելով հանդիպման նպատակը, և խոսքը փոխանցեց Ընկերության ներկայացուցիչ Պերճ Խաչատրյանին:

Պ. Խաչատրյանը ներկայացրեց, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով նախաձեռնվել է Հանրային քննարկում՝ ՀՀ Լոռու մարզի Քարաքերդի հանքավայրի կենտրոնական տեղամասի օգտակար հանածոյի

արդյունահանման թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման վերաբերյալ, որը ներառում է նաև օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը:

Պ. Խաչատրյանը նշեց, որ Հանրային լսման վերաբերյալ հայտարարությունն ու անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացված են համապատասխան մասմուլում, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքէջում, Փամբակ համայնքի կայքէջում և համայնքապետարանում:

Պ. Խաչատրյանը տեղեկացրեց, որ Հանրային լսմանը ներկա է նաև «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ Հերիքնազ Մկրտչյանը, քանի որ հայտը Ընկերության կողմից ներկայացված է Շրջակա միջավայրի նախարարությանը և քննարկվում է ՊՈԱԿ-ի կողմից, ուստի սույն լսումը օրենքով սահմանված կարգով հրավիրված է՝ ներկայացված նախնական գնահատման հայտի շուրջ քննարկումներ կազմակերպելու համար, որից հետո խոսքը փոխանցեց Հերիքնազ Մկրտչյանին:

Հ. Մկրտչյանը ներկայացրեց, որ իր կողմից իրականացվում է «ԱՍՍԱԹ» ՍՊ ընկերության կողմից փորձաքննության ներկայացված՝ ՀՀ Լոռու մարզի Քարաքերդի ոսկու հանքավայրի Վենտրոնական տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների լիցենզիայի ժամկետի երկարաձգման համար մշակված նախնական գնահատման հայտի փորձաքննական աշխատանքներ:

Նա նշեց, որ ինչպես հայտի փորձաքննական աշխատանքները, այնպես էլ հանրային քննարկումները կազմակերպվել են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան և նշված օրենքի պահանջներից ելնելով՝ կազմվել է նախնական գնահատման հայտ, որի բովանդակությունը համապատասխանում է օրենքով սահմանված դրույթների պահանջներին: Հայտում համառոտ ներկայացված են գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության շրջանակները: Զարկ է նշել, որ գործունեությունն իրենից ներկայացնում է ներկա պահին իրականացվող գործունեություն, որի համար նախատեսվում է իրականացնել ժամկետի երկարաձգում, չնայած որ փորձաքննական գործընթացում հաշվի են առնվում ինչպես գործունեության իրականացման հետ կապված և շրջակա միջավայրի բաղադրիչները, այնպես էլ տեխնիկական-տեխնոլոգիական լուծումներ, առաջարկություններ և դրա հետ կապված նաև նոր մոտեցումներ, նոր քնապահպանական լուծումներ:

Հ. Մկրտչյանը հայտնեց, որ սա երկրորդ հանրային քննարկումն է: Գործունեությունը ենթակա է նաև հիմնական գնահատման, և Շրջակա միջավայրի նախարարության կողմից գնահատման նպատակով Ընկերությանը պետք է տրամադրվի տեխնիկական առաջարրանք, որում սահմանվելու են բոլոր այն պահանջները, որոնք անհրաժեշտ են հիմնական գնահատման հաշվետվության կազմման համար: Առաջարրանքում նաև սահմանվում են գործընթացի մասնակիցներ և փորձաքննական գործընթացի հետ կապված այլ գործառույթներ: Այսօրվա հանրային քննարկման նպատակն է, որպեսզի շահառու, ազդակիր համայնքը մասնակցի և հանքավայրի, ինչպես ստորգետնյա, այնպես էլ վերգետնյա հատվածների շահագործման հետ կապված իր առաջարկները ներկայացնի, որոնք կներառվեն տեխնիկական առաջարրանքում: Արա շրջանակում կարևորվում է նաև սոցիալական բաղադրիչը:

Նա նշեց, որ փորձաքննական գործընթացին մասնակցել են ինչպես ՀՀ շրջակա միջավայրի նախարարության վարչություններ և մասնագիտական կառույցներ, այնպես էլ պետական լիազոր մարմիններ, որոնց կողմից ներկայացված կարծիքները, առաջարկներն ու մասնագիտական

դիտողությունները ևս հաշվի են առնվել այս փուլում իրականացված փորձաքննական աշխատանքներում:

Հ. Մկրտչյանը խոսքը փոխանցեց Ընկերության ներկայացուցիչ Պերճ Խաչատրյանին՝ ակնկալելով ներկայացված նախնական գնահատման հայտի և հնչեցվելիք հարցերի վերաբերյալ ստանալ սպառիչ պատասխաններ ու պարզաբանումներ:

Դ. Խաչատրյանը նշեց, որ Հանրային լսումը կազմակերպվել է Շրջակա միջավայրի նախարարություն Ընկերության կողմից նախնական գնահատման հայտը ներկայացվելու առիթով, որի հիման վրա նախարարության կողմից Ընկերությանը տրվելու է տեխնիկական առաջադրանք, թե ինչ հարցերի պետք է Ընկերությունն անդրադարձ շրջակա միջավայրի վրա զդեցության հիմնական գնահատման փուլում: Այսինքն, ընդգծվելու են բոլոր այն առանցքային դրվագները, առանցքային հարցերը, որոնք պետք է Ընկերության կողմից վերլուծվեն և ներկայացվեն շրջակա միջավայրի գնահատման հաշվետվության մեջ: Պետք է ներկայացվեն այն բոլոր հնարավոր ազդեցությունները և ռիսկերը, որոնք առաջացնելու է նախատեսվող գործունեությունը, ինչպես նաև նախատեսվեն բոլոր այն միջոցառումները, որոնք ուղղված են լինելու այդ ռիսկերի նվազեցմանը և հնարավորության դեպքում՝ այդ ռիսկերի բացառմանը, Ընկերության գործունեությունը հնարավորինս անվնաս դարձնելուն և շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելուն: Սա նշանակում է, որ որոշ ժամանակ անց կրկին հավաքվելու ենք՝ քննարկելու նախարարության կողմից տրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա մշակված հիմնական գնահատման հաշվետվությունը: Այսինքն, այս լսման հիմնական առաքելությունն այն է, որպեսզի Շրջակա միջավայրի նախարարությունը լրացնից տեղեկատվություն հավաքի անմիջապես տեղանքից, անմիջապես ազդակիր համայնքից, թե համայնքն ինչ խնդիրներ է տեսնում և ինչի վրա է ցանկանում, որ ուշադրություն դարձնի նախաձեռնողն իր գործունեության ընթացքում, ինչ խնդիրներ է ցանկանում, որպեսզի արտացոլվեն հետագա նախագծային փաստաթղթերում և որոնց վերաբերյալ ներկայացվեն համապատասխան լուծումներ, համապատասխան առաջարկներ և միջոցառումներ՝ այդ ազդեցությունն ու ռիսկերը նվազագույնի հասցնելու համար:

Հ. Մկրտչյանը խնդրեց համայնքի բնակիչներին անպայման բարձրաձայնել հանքի շահագործման վայրում առկա բնապահպանական խնդիրների մասին, եթե դրանք կան, որպեսզի հաշվի առնվելն հետագա գործողությունների ընթացքում, քանի որ համայնքի բնակիչներն ավելի տեղեկացված են դրանց մասին:

Ս. Կոստանդյանն իր հերթին դիմեց բնակիչներին՝ նշելով, որ եթե նույնիսկ այս պահին առկա խնդիր չկա, բայց հանքի շահագործման ընթացքում կարող են առաջանալ, անհրաժեշտ է անմիջապես տեղեկացնել համայնքապետարանին, որը կգործադրի հնարավոր բոլոր ջանքերը՝ գործընկերների հետ միասին խնդիրները լուծելու ուղղությամբ:

Համայնքի հեկավարը հավելեց նաև, որ համայնքը նույնպես գերծ չի մնացել Արցախից բռնի տեղահանված հայրենակիցներին ընդունելուց, և այդ հարցում համայնքին աջակցել է Ընկերությունը: Մասնավորապես, 80-ից ավելի լվացքի մեքենաներ է գնել, ինչպես նաև պատրաստակամություն է հայտնել աջակցել անասուններ ձեռք բերելու և այլ հարցերի լուծման շուրջ:

Դ. Խաչատրյանը հավելեց, որ այս լսման շրջանակում խոսքը գնում է արդեն իսկ շահագործվող համբավայրի գործունեության թույլտվության ժամկետի երկարաձգման մասին, այսինքն տվյալ պարագայում ոչ թե նոր հանքավայր է բացվում, որը շրջակա միջավայրի վրա նոր ազդեցություն է թողնելու, այլ ներկայումս այդ ազդեցություններն արդեն իսկ կան, արդեն իսկ համապատասխան միջոցառումները ձեռնարկվում են այդ ազդեցությունները նվազագույնի հասցնելու կամ բացառելու

ուղղությամբ, և այն հարցերը, որոնք համայնքի բնակչությանը կարող են անհանգստացնել, արդեն իսկ տեսանելի են վերջիններիս համար, ուստի դրանց բարելավման, լուծման ուղղությամբ նոր միջոցառումներ նախատեսվելու համար պետք է բարձրաձայնվեն այդ մասին, որպեսզի ներառվեն տեխնիկական առաջադրանքում և Ըսկերությունը կարողանա դրանք արտացոլել իր նախագծային կաստաթղթերում:

Հ. Մկրտչյանը հավելեց, որ թույլտվությունը երկարաձգվելու է 8 տարով և եզրակացությունը պետք է տրվի 8 տարվա համար, ուստի եթե ներկայիս տեխնոլոգիայում կան բացեր, ինդիրներ, պետք է բարձրացվի նաև դրանց կատարելագործման, նորագույն տեխնոլոգիաներով հազեցման հարցը, որպեսզի հնարավորինս նվազեցվի ազդեցությունը շրջակա միջավայրի, ջրային ռեսուրսների, հողային ծածկույթի և սոցիալական բաղադրիչի վրա:

Հանրային քննարկման մասնակից Յուրիկ Շավելյանը հետաքրքրվեց, թե հանքի գործունեությունը շարունակելու դեպքում այն լինելու է թունելային, թե՝ բացահանք: Միաժամանակ հավելեց, որ նախորդ լսման ժամանակ այս հարցի վերաբերյալ նույնպես իրենք հայտնել են, որ եթե հանքը թունելային լինի, իրենք համաձայն են դրա գործունեության շարունակականության հետ:

Հ. Մկրտչյանը պատասխանեց, որ Ըսկերության կողմից ներկայացված հայտի տվյալների համաձայն բացահանքի սահմանների ընդլայնում չի լինելու, ընդլայնումը լինելու է ստորգետնյա ուղղությամբ:

Ըսկերության երկրաբան Գարիկ Մալաքյանը հաստատեց Հ. Մկրտչյանի խոսքը և հավելեց, որ Ըսկերությունն աշխատում է իին ծրագրով (պրոյեկտով), բացահանքի աշխատանքներն ավարտին են մոտենում, միջոցներ են ձեռնարկվում հանքի ստորգետնյա աշխատանքները կազմակերպելու ուղղությամբ, իսկ ընդլայնումը վերաբերում է ստորգետնյա աշխատանքներին: Փորվելու են մի քանի հորատանցքեր՝ փոքր տրամագծով: Ունեն իին ճանապարհներ, որոնք կարգի են բերվել և շահագործվում են:

Հ. Մկրտչյանը հարցրեց Գ. Մալաքյանից, թե արդյոք ստորգետնյա աշխատանքներ կազմակերպելու, հորատանցքեր փորվելու դեպքում լրացուցիչ հողերի օտարում չի իրականացվելու, քանի որ այդ դեպքում իրենք պետք է համապատասխան տեղեկություն ունենան, որպեսզի անհրաժեշտ գրառումներ կատարեն փաստաթղթերում:

Գ. Մալաքյանը պատասխանեց, որ նոր հողերի օտարում չի իրականացվելու, քանի որ կատարվելիք աշխատանքներն իրականացվելու են լեռնահատկացման ակտի սահմաններում:

Հ. Մկրտչյանը հետաքրքրվեց, թե արդյոք տվյալ տարածքներում հողերի կատեգորիան փոփոխված է:

Ըսկերության ներկայացուցիչները պատասխանեցին, որ այդ հատվածներում դեռևս փոփոխված չեն գտնվում է անհրաժեշտ նախաձեռնությունների փուլում:

Գ. Մալաքյանը հավելեց, որ ստորգետնյա աշխատանքների իրականացման համար ոչ մի խոշընդուն չկա, դեպի հանքուղի տանող ճանապարհները կան:

Դ. Խաչատրյանն ընդգծեց, որ «ընդլայնում» ասվածն այս պարագայում պետք է շատ պայմանական ընկալել, քանի որ խոսքը վերաբերում է ոչ թե տարածքների ընդլայնմանը, այլ կատարվող աշխատանքների ընդլայնմանն ու շարունակմանը: Այլ կերպ ասած, այս պահի դրությամբ նախագծային փոփոխություն չի իրականացվում, նոր տարածքներ չեն ընդգրկվում կատարվող աշխատանքների մեջ, այսինքն կա արդեն իսկ տրված թույլտվություն և կան այդ թույլտվությամբ սահմանված տարածքներ, տարածքների փոփոխություն չի նախատեսվում:

Հ. Մկրտչյանը հետաքրքրվեց, թե արդյոք ստորգետնյա աշխատանքների համար մուտք ու ելք չի նախատեսվում, ինչը պետք է նախագիծը ներառի, և որի համար նոր տարածքներ, մակերեսներ են

պետք՝ ստորգետնյային մոտեցող ճանապարհ, հանքուղի մտնող ճանապարհ: Սրանք բոլորը նոր տարածքներ են:

Գ. Մալարյանը պատասխանեց, որ հենց այդ պատճառով էր ինքն արդեն նշել, որ շահագործում են ին ճանապարհները, որոնք առկա են նախագծում:

Հ. Մկրտչյանը հետաքրքրվեց, թե արդյոք առկա նախագծով նախատեսվածք բավարարում է փաստացի իրավիճակին:

Գ. Մալարյանը հաստատեց, որ բավարարում է:

Միաժամանակ Պ. Խաչատրյանը հավելեց, որ այս ժամկետի երկարաձգման պատճառն այն չէ, որ Ընկերությունը չի հասցրել այս 8 տարիների ընթացքում նախատեսված պաշարի քանակը հանել, այլ պայմանավորված է այն հանգամանքով, որ Ընկերությունը թույլտվությամբ սահմանված ժամկետի առնվազն 80 տոկոսը չի աշխատել, այսինքն շահագործում չի իրականացվել և նախագծով նախատեսված քանակը չի հանվել: Դրա համար Ընկերությունը խնդրել է, որպեսզի ժամկետի երկարաձգում լինի 8 տարով: Այսինքն ոչ հանքաքարի պաշարի ավելացում է նախատեսվում, ոչ լեռնահատկացման, այսինքն ոչ թե օգտակար հանածոյի տրամադրված քանակի ավելացում, այլ եղած նախագծի շրջանակներում Ընկերությունը հայցում է աշխատելու հնարավորություն՝ ժամկետի տեսքով:

Հ. Մկրտչյանը հետաքրքրվեց, թե արդյոք Ընկերությունը չի նախատեսում ավելի արդյունավետ տեխնոլոգիաներ ձեռք բերել:

Պ. Խաչատրյանը հավելեց, որ, բնականաբար, արդեն իսկ գործունեությունը շարունակելու դեպքում նախատեսվում է ավելի ժամանակակից տեխնոլոգիաներ, մոտեցումներ ու մեթոդներ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու համար: Քանի որ նախագիծը հաստատվել է 2013 թվականին, կիրառվել են այն ժամանակվա մեթոդներն ու մոտեցումները: Հիմա անցել է 10 տարի, և արդեն կան ավելի կատարելագործված նոր մեթոդներ, մոտեցումներ ու տեխնոլոգիաներ, որոնք նվազեցնում են շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:

Հ. Մկրտչյանը հետաքրքրվեց, թե հանքուղուց ջրերն ինչպես պետք է հեռացվեն:

Գ. Մալարյանը պատասխանեց, որ հանքուղում այնքան ջուր չի հավաքվում, որպեսզի հեռացման կարիք լինի:

Հ. Մկրտչյանը հավելեց, որ եթե ստորգետնյա աշխատանքներ իրականացվեն, ապա ջրեր կհավաքվեն և դրանց հեռացման կարիք կառաջանա: Այս հարցերը տեխնիկական առաջարկանքում պետք է ներառվեն, քանի որ բավականին դիմում են պարունակում:

Պ. Խաչատրյանը հաստատեց, որ դրանք անպայման կներառվեն և հարցի լուծումներ կառաջարկվեն:

Հ. Մկրտչյանը նշեց, որ հայտի տեղեկատվության համաձայն՝ լեռնահատկացման տարածքից դուրս N4 բովանցքի ջուրը գյուղացիներն օգտագործում են: Արդյոք ջրի համապատասխանությունը ստուգվելով է օգտագործվում գյուղացիների կողմից: Այս պահին ստորգետնյա հանքավայրը դեռ չի շահագործվում, սակայն շահագործման դեպքում ջրի որակական չափանիշը կփոխվի:

Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ ջուրը խողովակներով իջնում է դեպի գյուղ, և քանի որ գյուղում ջրի խնդիր կա, գյուղացիներն օգտագործում են այդ ջուրը հասկապես անասնապահության մեջ:

Հ. Մկրտչյանը հաստատեց, քանի որ ստորգետնյա հանքի շահագործման դպրում ջրի որակը փոխվելու է, անհրաժեշտ է մաքրման սարքավորումներ տեղադրել:

Գ. Մալարյանը նշեց, որ պատրաստվում են իրականացնել ջրի ֆիլտրացում:

Հ. Սկրտչյանը հետաքրքրվեց, թե արդյոք Ընկերությունն ունի կենցաղային կեղտաջրերի մաքրման կայան: Միաժամանակ, խորհուրդ տվեց տեխնիկական առաջադրանքում անպայման անդրադարձնալ ինչպես այդ հարցին, այնպես էլ հանքություց ջրի հեռացման և ջրի մաքրմանն ուղղված հարցերի լուծումներին: Հավելեց նաև, որ առաջարկվող լուծումները պետք է արդիական լինեն, քանի որ թույլտվությունը պետք է երկարաձգվի 10 տարով:

Տիկին Սկրտչյանը նաև ճշգրտեց Ընկերության ներկայացուցիչներից, որ դիտարկվում է միայն արդյունահանուման աշխատանքների իրականացում, և Ընկերությունը տեղում հումքի մշակում չի նախատեսում իրականացնել:

Միաժամանակ հետաքրքրվեց, թե որտեղ են տեղակայված հումքի ժամանակավոր կուտակման վայրերը:

Գ. Մալաքյանը նշեց, որ իրենց տարածքում ունեն համապատասխան բավարար տարածքներ, պահեստներ, որտեղ կուտակվում է հումքը:

Տիկին Սկրտչյանը դիմեց ներկաներին՝ հայտնելով, որ իր հարցերը սպառված են, և վերջիններս կարող են հանդիսավոր առաջարկներով:

Ա. Կոստանդյանը Հանրային լաման մասնակիցներին հորդորեց, որ առաջին հերթին ներկայացվեն բնապահպանական հարցեր:

Հանրային քննարկմանը ներկա գոնվող բնակիչներից մեկը հայտնեց, որ զյուղի տարածքում կա ենթեցուն կից նոր տեղադրված խաչ: Անհրաժեշտ է ցանկապատել այն, քանի որ զյուղի անատուններն այդ տարածքում արածում են և տարածքն աղտոտվում է: Միաժամանակ, այդ տարածքում ջրամատակարարման հարցի լուծման պնդրամեջտություն կա: Բնակիչը նաև առաջարկեց տեղադրել նոր խաչ՝ արցախյան ազատամարտում զոհվածների հիշատակին, քանի որ զյուղից նույնպես զոհեր կան:

Մասնակիցն ավելացրեց, որ Ընկերության ներկայացուցիչների հետ զյուղը որևէ խնդիր երևէ չի ունեցել: Ինչպիսի հարցով դիմել են, անմիջապես պատրաստակամորեն լուծել է:

Տիկին Սկրտչյանը հետաքրքրվեց, թե արդյոք պայթեցման աշխատանքների, փոշեգոյացման վերաբերյալ հարցեր չունեն ներկաները:

Գ. Մալաքյանը նշեց, որ պայթեցում արվելու է ստորգետնյա աշխատանքների փուլում, բացահանքում պայթեցում չի իրականացվում:

Յու. Շավելյանը հավելեց, որ դա իրենց չի խանգարում: Հանքի տեղադիրքն այնպիսին է, որ բնակիչները չեն զգում դրա ազդեցությունը: Միաժամանակ նշեց, որ հանքից եկող ջուրը դեռևս ԽՍՀՄ տարիներին օգտագործվել է զյուղացիների կողմից:

Տիկին Սկրտչյանը դարձյալ մատնանշեց, որ արդյունահանուման արդյունքում ջրի որակը կարող է վնասվել:

Գ. Մալաքյանը հավելեց, որ Ընկերությունը կիրականացնի ժամանակակից մեթոդներով ֆիլտրացում:

Յու. Շավելյանը ներկայացրեց, որ զյուղապետարանի հաշվեկշռին առկա է երկու աղբյուր, որից 1720-ական թվականներից տարածաշրջանի բնակիչներն օգտվել են: Դրա ստուգման արդյունքում դեռևս շատ տարիներ՝ առաջ պարզվել է, որ աղբյուրի ջուրը պիտանի չէ խմելու համար, վնասակար նյութեր կան դրա մեջ, ուստի այդ հանգամանքը կապել հանքի հետ, ճիշտ չէ: Հատկապես որ աղբյուրները հանքից բավականին հեռու են գտնվում:

Ներկաներից մեկն էլ նշեց, որ, ճիշտ է, Ընկերությունը պատրաստակամորեն լուծում է բոլոր այն սոցիալական խնդիրները, որոնցով զյուղացիները դիմում են, այնուամենայնիվ, անհրաժեշտ է հստակ սահմանել այդ հարցերի շրջանակը, և համայնքի դեկավարին առաջարկեց ծրագիր՝ մշակել՝ հաշվի

առնելով հարցերի առաջնահերթությունները և առաջնորդվել այդ ծրագրով, որպեսզի կատարվող աշխատանքները համակարգված լինեն:

Համայնքի ղեկավարն է հավաստիացրեց, որ հանրային լսումների արդյունքում բոլոր սոցիալական խնդիրները կրնարկվեն և իրենց ամրագրումը կատանան Ընկերության Ընդունակության պայմանագրում:

Հաշվի առնելով, որ առարկայական հարցերը և առաջարկությունները սպառված էին, Ս. Կոստանդյանը Հանրային քննարկումը հայտարարեց ավարտված:

Միաժամանակ, ներկաներին տեղեկացվեց, որ գրավոր առաջարկներ ունենալու դեպքում կարող են սահմանված ժամկետում դրանք ներկայացնել:

Սույն արձանագրությունը կազմված է երեք օրինակից, հայերեն:

Ստորագրություններ

Հանրային քննարկման պատասխանատու / վարող՝
ՀՀ, Լոռու մարզի Փամբակ համայնքի
ղեկավար Ս. Կոստանդյան

Հանրային քննարկման արձանագրող՝
Փամբակի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար
Ռ. Մինասյան



Զեռնարկող՝
«ԱՍՍԱԹ» ՍՊ ընկերություն
Ներկայացուցիչ Պ. Խաչատրյան

